

Լ. Գ. Ազատյան

ՀԱՅ ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՍԱՆՀԻՆԳ ՏԱՐՈՒՄ

Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում իսկական վերածնունդ հանդիսացավ հայ ժողովրդի համար։ Ազատագրված հայ ժողովուրդը, Սովետական Միության մյուս եղբայրական ժողովուրդների հետ, ամեն հնարավորությամբ ստացավ յուր բարգավաճման համար, ստացավ ամեն նախապայման յուր դարավոր կուլտուրայի ու գիտության զարգացման համար։ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո անցած այս քսանհինգ տարիների ընթացքում անասելի թափով զարգացել է գիտությունը։ Գիտության ճյուղերից մեկը՝ լեզվաբանությունը ես աննախընթաց թափով զարգացել ու հասել է բարձր մակարդակի։

Առաջին և խոշորագույն բեկումը, որ կատարվել է հայ լեզվաբանության մեջ՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, լեզվի փիլիսոփայության մեջ կատարված արմատական հեղաշրջումն է, լեզվաբանության տեսական սկզբունքների մեջ կատարված հիմնական անցումը։ Առաջնորդվելով մարքս-լենինյան դիալեկտիկական մատերիալիզմով, ուսումնասիրելով լեզուն, — և առանձնապես հայերեն լեզուն, — մարքս-լենինյան փիլիսոփայության հիմունքներով, ու հետևելով մեծ գիտնական Ն. Յա. Մառի ուսմունքին՝ Սովետական Հայաստանի մարքսիստ լեզվաբաններն իրենց ամբողջ գիտությունն ու կարողությունները ի սպաս են դրել մարքսիստական լեզվաբանության, մասնավորապես՝ մարքսիստական հայագիտության զարգացման պատվավոր գործին, և այսօր, — անվերապահորեն կարող ենք ասել, — չափազանց շատ արդյունքների են հասել այդ ասպարիզում։

Սովետական կարգերի հաստատումից հետո մեր լեզվաբանների առջև դժվարին խնդիր էր դրված՝ քննադատորեն յուրացնել անցյալի ժառանգությունը, օգտագործել այն դրականը, որ իբրև ժառանգություն ստացվել էր բուրժուական լեզվաբանությունից, իսկ մյուս կողմից՝ հենց հնի օգտագործմամբ և նորանոր ուսումնասիրություններով ստեղծել մարքսիստական հայագիտությունը։

Ինքնին հասկանալի է, որ այդ բանը կատարված է ոչ միանգամից և ոչ էլ առանց պայքարի։ Ընդհակառակն, հայ լեզվաբանության այս քսանհինգամյա շրջանի պատմությունը ցույց է տալիս, թե ինչպիսի սուր պայքար է գոյություն ունեցել, — իսկ որոշ խնդիրներում դեռ այժմ էլ գոյություն ունի, — մարքսիստական լեզվաբանության լեզվաբանական այլեայլ ուղղությունների միջև։ Հենց այդ է պատճառը, որ սովետական կարգերի հաստատումից հետո անցած այս քսանհինգ տարիներում հայ լեզվաբանության մեջ կարևոր տեղ է զբաղում անցյալի ժառանգության՝ բուրժուական լեզվաբանության սկզբունքների քննադատությունը, մեծ մասամբ առանձին հոդվածներով։ Այսպես, գեռևս 1930 թվին

հնդեվրոպաբանութեան քննադատութիւնն է տալիս զոցեան Գուրգեն Սեվակը յուր «Հաբեքարանքայունն և մարքսիզմ» ընդարձակ հոդվածում (Ն. Ուղի, 1930, № 6-7, էջ 184-97), Պրոֆ.-դոկտոր Արարատ Ղարիբջանը «Պրոֆ. Արեղյանի լեզվաբանական տեսութիւններին» մասին հոդվածում (Մարքսիզմ-լենինիզմի Խնտիտուտի Տեղեկագիր, 1932, № 1, էջ 154-68) քննադատում է հոգեբանական ինդիվիդուալիզմը լեզվաբանութեան մեջ, իսկ Ակադ. Մառի պայքարը ռուսականացումը դեմ հոդվածում (Տեղեկագիր Արմֆանի, 1943, № 2, էջ 3-26) մերկացնում է ռուսական տեսութիւնը լեզվաբանութեան մեջ՝ հիմնվելով Մառի ուսմունքի վրա, ՀՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի իսկական անդամ, պրոֆ.-դոկտոր Գրիգոր Ղափանցյանը քննադատում է հնդեվրոպաբանութեան թերութիւնները յուր «Մառը և հնդեվրոպաբանացումը» հոդվածում (Սովետական Հայաստան, 1943, № 103), Այդ հոդվածում պրոֆ. Ղափանցյանը ցույց է տալիս, որ հնդեվրոպական լեզվաբանութիւնը միակողմանիորեն է ուսումնասիրել հայոց լեզուն, որ նա աչքաթող է արել հայերենի մեջ եղած այն շերտը, որ հայոց լեզուն կապում է տեղական լեզուների հետ:

Եթե մի կողմից Սովետական Հայաստանի լեզվաբանները քննադատում են բուրժուական լեզվաբանութիւնը, մերկացնում լեզվաբանական տարբեր ուղղութիւնների սխալներն ու թերութիւնները, ապա մյուս կողմից նրանք աշխատում են տարածել, մասսաներին հաղորդել մարքսիստական լեզվաբանութեան տեսական սկզբունքները և հենց այդ իսկ սկզբունքներով իրենք էլ փորձում են ուսումնասիրել լեզվական այս կամ այն երևույթը: Այսպես, դեռևս 1926 թվին պրոֆ. Գ. Ղափանցյանը յուր «Հաբեքարանքայունն և տեսութիւնը» հոդվածում (Երևանի Պետ. Համալսարանի գիտական տեղեկագիր, 1926, № 2, էջ 374-97) բացատրում է ակադ. Ն. Յա. Մառի նոր ուսմունքի հիմնական սկզբունքները՝ կանգ առնելով հատկապես Մառի հայագիտական ուսումնասիրութիւնների ու դրանց արդյունքների վրա: 1931 թվին գրած «Լեզվի և նրա զարգացման դիալեկտիկայի շուրջը» հոդվածում (Ն. Ուղի, 1931, № 5, էջ 107-41) պրոֆ. Ղափանցյանը հաջող կերպով լուսաբանում է լեզվի դիալեկտիկական զարգացման որոշ հարցերը: Բոցենտ Գ. Սեվակը յուր «Լենինը և դիալեկտիկական օրինաչափութիւնները լեզվի մեջ» ընդարձակ հոդվածում (Մարքսիզմ-լենինիզմի Խնտիտուտի Տեղեկագիր, 1935, № 1, էջ 143-67) քննութեան է առնում մարդկային լեզուն մարքսիզմ-լենինիզմի հիմունքներով, երևան հանում դիալեկտիկական օրինաչափութիւնները լեզվի մեջ և հենց դրա վրա հիմնված՝ սահմանում «լեզվի սպեցիֆիկումը», ճիշտ կերպով բնորոշում մարդկային լեզուն:

Այսպես, ահա, մի կողմից՝ քննադատելով լեզվաբանական այլ և այլ ուղղութիւնների սխալներն ու թերութիւնները և քննադատաբար յուրացնելով անցյալի ժառանգութիւնը, իսկ մյուս կողմից՝ մարքս-լենինյան դիալեկտիկական մասերիալիզմի հիմունքներով քննութեան առնելով լեզվական երևույթները, Սովետական Հայաստանի լեզվաբանները աստիճանաբար կարողացան ճիշտ կերպով լուծել լեզվի փիլիսոփայութեան մի շարք կարևորագույն հարցեր: Լեզվաբանական առանձին հարցերի քննութեանը նվիրված իրենց հոդվածներով նրանք անհրաժեշտ հոգ պատրաստեցին ավելի մեծածավալ, ընդհանուր բնութի ուսումնասիրութիւնների համար, և ահա, այդ բանի արդյունքը եղավ պրոֆ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվա-

քառասունը մեծածավալ աշխատությունը (Երևան, 1939)։ Օգտագործելով յուր երկարամյա լեզվաբանական հետազոտությունների շնորհիվ հավաքած մատերիալը՝ պրոֆ. Ղափանցյանը գրեց այդ մեծարժեք աշխատությունը՝ նվիրված ընդհանուր լեզվաբանության խիստ կարևոր հարցերին (հնչյունաբանություն, ձևաբանություն, բառագիտություն)։ Այդ գրքի մի հատվածը՝ ներածական ընդհանուր մասը և հնչյունաբանությունը նախապես հրատարակված է առանձին (Երևան, 1937)։ Հետագայում, ավելացնելով դրան ձևաբանությունը և բառագիտությունը՝ իմաստաբանությամբ հանդերձ, հրատարակեց իրեն մի ամբողջական ուսումնասիրություն։ Հեղինակը, օգտագործելով լեզվաբանական գրականությունը և վերանայելով այս գիտության մեջ եղած տարբեր տեսությունները մարքս-լենինյան դիալեկտիկական մատերիալիզմի հիմունքներով, աշխատել է տալ մարդկային լեզվի՝ լեզվական բարդ երևույթների տեսական վերլուծությունը։ Առանձին գլուխներում խոսելով լեզվական տարբեր երևույթների մասին՝ նա բացատրում է այդ երևույթներն իրենց պատմա-հասարակական բարդ իրողությունների մեջ, ցույց տալիս այդ երևույթների անխզելի կապը հասարակական գոյի հետ։ Հեղինակը քննադատաբար օգտագործել է անցյալի հարուստ ժառանգությունը ընդհանուր լեզվաբանության ասպարեզում։ յուրացրած լինելով մեծանուն գիտնական Ն. Յա. Մառի ուսմունքը՝ նա հաջողությամբ կարողացել է լուծել լեզվաբանական կարևոր, սկզբունքային հարցեր։ աշխատությունն արժեքավորվում է առանձնապես նրանով, որ մի շարք խնդիրներում հեղինակն արտահայտում է նոր, ինքնուրույն տեսակետներ, որոնք, չնայած իրենց հիպոթետիկ լինելուն, շատ ուշագրավ են և ցույց են տալիս հեղինակի անկաշկանդ, ինքնուրույն ու անկանխակալ դատողությունը լեզվական այս կամ այն երևույթի մասին։ Պրոֆ. Ղափանցյանի այս գիրքը մեր ժամանակի լեզվաբանական տեսական գրականության մեջ մի մեծարժեք ավանդ է, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ հայ լեզվաբանական գրականությունը չափազանց աղքատ, գրեթե զուրկ է այդպիսի աշխատություններից։

Լեզվի տեսական հարցերի ուսումնասիրությանը զուգընթաց Սովետական Հայաստանի լեզվաբանները լրջորեն զբաղվել ու զբաղվում են հայոց լեզվի այլ և այլ կողմերի հետազոտությամբ և շատ մեծ արդյունքների են հասել այդ ասպարեզում։ Առաջին հերթին զգալի աշխատանք է կատարված հայոց լեզվի պատմության ուսումնասիրության բնագավառում։ Լույս են տեսել հայոց լեզվի պատմությանը նվիրված այնպիսի աշխատություններ, ինչպիսիք են ՀՍՍՌ Գիտ. Ակ. իսկական անդամ, պրոֆեսոր-դոկտոր Հրաչյա Աճառյանի «Հայոց լեզվի պատմությունը» (1 մաս, Երևան, 1940), որի երկրորդ մասը տպագրվում է, և պրոֆ.-դոկտոր Ար. Ղարիբյանի «Հայոց լեզվի պատմությունը ուսումնասիրությունը» (Երևան, 1937)։ Աճառյանի ստվարածավալ աշխատությունը լիակատար ամփոփում է այն ամենի, ինչ որ արված է շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում հնդեվրոպաբանության ոգով՝ հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ասպարեզում։ Դժվար է պատկերացնել փաստական նյութի ավելի մանրակրկիտ, ավելի ամբողջական ուսումնասիրություն, քան այդ աշխատությունն է։ Առանձին գլուխների մեջ հեղինակը մանրամասնորեն ուսումնասիրում է հայոց լեզվի բառապաշարը, պարզում, թե որ լեզվից, երբ և ինչ ազ-

դեցություն է կրել հայոց լեզուն թո՛ւ բառապաշարի և թե՛ քերականության կողմից, թե ինչ նշանակություն է ունեցել այդ ազդեցությունը հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման համար և այլն և այլն: Երկրորդ մասը, որ արդեն տպագրվում է, նվիրված է հայերենի տարբեր շրջանների (ոսկեդարյան, հետ-ոսկեդարյան, հունաբան, միջին հայերեն և այլն) ուսումնասիրությանը: Պրոֆ. Ահաբյանի այս աշխատությունը մի մեծարժեք գանձ է հայ լեզվաբանական գրականության մեջ: Ինչ վերաբերում է պրոֆ. Ղարիբյանի գրքին, ապա նա գերազանցապես հայոց լեզվի պատմության քննադատական, տեսական ուսումնասիրությունն է, որի մեջ հեղինակը վերանայում, լուրջ կերպով քննության է տոնում հայոց լեզվի պատմության մի շարք սկզբունքային հարցեր, ինչպիսիք են՝ հայոց լեզվի կազմավորումը, հայոց լեզվի պատմության պերիոդիզացիան, հայոց լեզվի ցեղակցության հարցը և այլն, և աշխատում լուծել դրանք մարքսիզմ-լենինիզմի հիմունքներով: Այս աշխատությունն առանձնապես ուշագրավ է նրանով, որ դա առաջին գիրքն է, որի մեջ փորձ է արվում ուսումնասիրել հայոց լեզվի պատմությունը լեզվի նոր ուսմունքի համաձայն, որի մեջ հաջողությամբ օգտագործվում են մեծ հայագետ Ն. Յա. Մառի բարձրարժեք ուսումնասիրությունները՝ առանձնապես հայերենի մասին:

Հայոց լեզվի հնագույն շրջանի պատմության հարցերով է զբաղվել նաև պրոֆ. Ղափանցյանը, որ հատուկ ուշադրությամբ ուսումնասիրելով տեղական (խալդ-ուրարտական) և փոքր-ասիական լեզուները՝ յուր աշխատությունների մեջ փորձում է ցույց տալ, վեր հանել հայոց լեզվի կապը այդ լեզուների հետ: Այսպես, յուր *Chetto-armeniaca* (Երևան, 1931—33) աշխատության մեջ քննության է առնում հայերենի և փոքր-ասիական լեզուների, առանձնապես հաթերենի փոխազդեցությունների հարցը և բազմաթիվ հայերեն բառերի ստուգաբանությամբ ցույց տալիս այն մերձավոր կապը, որ գոյություն ունի հայերեն ու հաթերեն լեզուների միջև: «Ուրարտուի պատմություն» (Երևան, 1940) աշխատության մեջ խորը կերպով վերլուծելով ուրարտական ու հայերեն լեզուները, նա երևան է հանում բազմաթիվ փաստեր, որոնցով այդ երկու լեզուները փոխադարձաբար կապվում են միմյանց հետ: Առանձնապես ուշագրավ են պրոֆ. Ղափանցյանի երկու աշխատությունները. առաջինն է *Хеттские боги у армян* (Երևան, 1940), որի մեջ հեղինակը դարձյալ քննության է առնում հայա-խեթական փոխհարաբերությունները, բայց ոչ միայն լեզվական մատերիալի վրա հիմնվելով, այլև երկու ժողովուրդների պանթեոնի ուսումնասիրությամբ, երկրորդն է *Историко-лингвистическое значение топонимии древней Армении* (Երևան, 1940): Ուսումնասիրության հիմնական նյութն է կազմում լեզվաբանական պատմական քննությունը Հայաստանի այն տեղանունների, որոնք պահպանված են խալդական արձանագրություններում և հայկական գրավոր ու այլ կարգի հուշարձաններում: Գրքի մեջ նախ քննության են առնվում խալդական շրջանի ցեղային տեղանունները, որոնք հեղինակի կողմից դիտվում և ուսումնասիրվում են իրրև Հայաստանի պատմության հնագույն աղբյուրներ: Այնուհետև քննության են առնվում ցեղային շրջանի հայկական տեղանունները, կուլտային շրջանի (КУЛЬТОВОГО периода) տեղանունները, շինարարական և այլ տերմիններից ստացված տեղանունները և, վերջապես, տեղանվանական նորակազմությունները:

Այս բոլոր հարցերը հեղինակը հետազոտում է պատմա-հասարակական ու լեզվաբանական մոտեցմամբ և ցույց տալիս նրանց նշանակությունը հայ ժողովրդի կազմավորման խնդրի լուսաբանման համար: Այս երկու գրքերն էլ մեծ արժեք ունեն թե հայ ժողովրդի պատմության և թե հայոց լեզվի հնագույն շրջանների ուսումնասիրության համար:

Ժամանակակից հայոց լեզվի պատմության ուսումնասիրությամբ է զբաղված դոցենտ Գուրգեն Սեվակը: Երկար ասորիներ ուսումնասիրելով այդ նյութը, Սեվակն արդեն ավարտել է յուր աշխատությունը, սրի համառոտությունը հրատարակել է իր «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ (տես ստորև):

Մեծ աշխատանք է կատարված բառադիտության ու բառարանագրության ասպարիզում: Հայ լեզվաբանության պատմության մեջ մեծագույն երևույթներից մեկն է պրոֆ. Հր. Աճառյանի «Հայերեն և արամեական բառարան»-ի հրատարակությունը (Երևան, 1926—35): Յոթ հատորից բաղկացած մի ծովածավալ աշխատություն, որին նայելն անգամ պատկառանք է ներշնչում: Բուն աշխատությունը բաղկացած է վեց հատորից (9000 էջ—ապակետիպ): Յոթերորդ հատորն է կազմում հավելվածը: Համեստ վերնագիր կրող այս աշխատությունը լիակատար ցանկն է հայոց լեզվի արմատական բառերի՝ նրանց բացատրությամբ, քերականական տեղեկություններով ու ստուգաբանությամբ հանդերձ: Այս բառարանի մասին փոքր ի շառե ամբողջական գաղափար կազմելու համար ավելորդ չենք համարում ծանոթացնել բառարանի կառուցվածքին ու բովանդակությանը: Բառարանում հերթականությամբ ամփոփված են բոլոր հայերեն արմատական բառերը. յուրաքանչյուր արմատական բառի նվիրված հատվածը բաժանվում է հինգ բաժնի. 1) Բառագիտություն, որտեղ տրվում են՝ արմատը (գլխատառով գրված), այդ արմատի թեքական ձևերը, նշանակությունը, վկայություններ բառի գործածության մասին՝ միշտ վերցնելով հնագույնը, նրանից կազմված բառերը և, վերջապես, տարբեր գրչությունները: 2) Ստուգաբանություն, որը կազմում է բառարանի հիմնական, ամենակարևոր մասը. այստեղ հեղինակը տալիս է բառի ստուգաբանությունը, եթե կա այդպիսին և եթե իր կողմից ճիշտ է համարված, նշելով, թե ով է տվյալ ստուգաբանության հեղինակը: Բայց որովհետև շատ բառերի համար բազմաթիվ հեղինակների կողմից շատ ու շատ ստուգաբանություններ են առաջարկված, ուստի և հեղինակը միայն իր ընտրությամբ չի բավականացել. նա յուրաքանչյուր ստուգաբանություն ճիշտ կամ անճիշտ համարելու համար ստացել է նշանավոր հայագետ Հյուրշմանի, իսկ նրա մահվանից հետո՝ Մեյբի հավանությունը: 3) Ստուգաբանությունների պատմություն. այս բաժնում հեղինակն ամփոփում է բոլոր այն բառագիտական քննությունները կամ նույնիսկ դիտողությունները յուրաքանչյուր հայերեն բառի վերաբերյալ, որոնք կատարվել են հինգերորդ դարից մինչև բառարանի հրատարակության ժամանակը հայ կամ օտար հեղինակների կողմից: Այստեղ հեղինակը ժամանակագրական հաջորդականությամբ բերում է տվյալ բառի համար առաջարկված բոլոր այն ստուգաբանությունները, որոնք՝ իր կողմից անճիշտ համարվելով՝ երկրորդ բաժնում տեղ չեն գտել, ինչպես և հայանում, թե ով է առաջին անգամ առաջարկել տվյալ բառի ճիշտ ստուգաբանությունը: Այսպիսով տրվում է հայերեն բառերի ստուգաբանության կա-

տարյալ պատմությունը սկսած հինգերորդ դարից (հայերեն աբուբենի գյուտի ժամանակից) մինչև մեր օրերը՝ 4) Գավառական բառեր, որտեղ արված են յուրաքանչյուր արմատի ստացած զանազան ձևերը հայերեն բաղաձայնի բարբառներում։ Այս բաժինը առանձնապես մեծ կարևորություն ունի հայերենի բարբառների և հայոց լեզվի պատմության ուսումնասիրության համար։ Հեղինակը կազմել է 30 բարբառների ու ենթաբարբառների բառացանկը և ներմուծել բառարանի այս բաժնի մեջ։ Այս մասի արժեքը է՛լ ավելի մեծանում է այն բանի շնորհիվ, որ շատ հայերեն բարբառներ այժմ անհետացել են, մանավանդ առաջին համաշխարհային պատերազմից հետո և հենց պատերազմի հետևանքով, ուստի և նրանց մասին գիտության համար պահպանված նյութը միայն այս բաժնում տրվածն է։ 5) Հայերենից փոխառյալ բառեր, որի մեջ տրված է, թե հայերեն այսօրինակ բառը որ լեզվի մեջ է մտել իբրև փոխառություն։ Այս բաժինը նույնպես կարևոր է այն տեսակետով, որ ցույց է տալիս հայերենի ազդեցությունը ուրիշ լեզուների վրա, մի բան, որով լեզվաբաններն առհասարակ շատ քիչ են զբաղվել։

Բառարանի կառուցվածքի այս համառոտ նկարագիրն արդեն բավական է գաղափար կազմելու համար այն ապշեցուցիչ աշխատանքի մասին, որ կատարել է հեղինակը շուրջ 40 տարվա ընթացքում։ Դժվար է հավատալ, թե մի մարդ կարող է այդքան բան անել և, սակայն, արված է և այն էլ ինչպիսի՜ հմտությամբ, ինչպիսի՜ բարեխղճությամբ։ Հեղինակը կատարյալ հաջողությամբ իրականացրել է յուր ղզլխիչ ծրագիրը՝ ստեղծելով մի անգերազանցելի գործ։ Արմատական բառարանը ամփոփում է հայ լեզվաբանության մի ճյուղի, այն է՝ ստուգաբանության։ Նրա մեջ պարունակվում է այն ամենը, ինչ որ որևէ ժամանակ, որևէ մեկի կողմից ասված է հայերեն որևէ բառի մասին։ Ղրա շնորհիվ է ահա, որ դարագլուխ կազմող այս աշխատությունը դարձել է հայագիտության ամենամեծ կոթողներից մեկը։ Նրա մեծ արժեքը ցույց տալու համար ավելորդ չենք համարում հիշել մեծ հայագետ Ն. Յա. Մառի խոսքերը, որը դուռն է բացում վիճակում ծանոթանալով բառարանին (1906), հետևյալ կարծիքն է հայտնել. «Հ. Աճառյանի աշխատությունը, իմ կարծիքով, երբ այն լիովին տպագրված լինի, հայերեն լեզվի մասին լեզվաբանական գրականության մեջ մեծ երևույթ կհանդիսանա իբրև արժեքավոր տեղեկատու մի ձեռնարկ, որի նմանը չկա ոչ միայն հայկական, այլև եվրոպական գիտական գրականության մեջ» (Արմատական բառարան, հ. 7, էջ 202)։ Իրոք, ոչ մի ուրիշ լեզվով և ոչ մի ուրիշ լեզվի համար այդպիսի ընդարձակությամբ ստուգաբանական բառարան չկա։ Եղածների մեջ ընդարձակագույնն է Болсacq-ի հունարենի ստուգաբանական բառարանը, որը սրա համեմատությամբ շատ սեղմ է (շուրջ 1500 էջ)։

Նույնպիսի մեծարժեք աշխատություն է նույն հեղինակի «Հայոց Գնճաճանճանքի քառարան»-ը, որի առաջին հատորն է միայն լույս տեսել (Երևան, 1942), իսկ երկրորդը տպագրվում է։ Ամբողջ բառարանը բաղկացած է լինելու հինգ հատորից։ Այս աշխատության մեջ հեղինակը հավաքել, դասավորել և ուսումնասիրել է հայոց լեզվում գործածված բոլոր անձնանունները սկսած հնագույն ժամանակներից մինչև տասնհինգերորդ դարը։ 1500 թվից մինչև մեր օրերը եղած անձնանուններից հավաքել է գրական-

նության ու պատմության մեջ նշանավոր անձերի անունները միայն, Յուրաքանչյուր անվան մասին հեղինակը խոսում է ծրկու հատվածում. առաջնում բերում է անունը՝ առկա նրա ծագումը կամ սաուգարանությունը և հիշելով նրա փառաբանական, ժողովրդական, ինչպես և աղավաղված ձևերը, Երկրորդ հատվածում պատմական հաջորդականությամբ հիշում է ավյալ անունը կրած բոլոր անձանց՝ առկա նրանց մասին կենսագրական համառոտ տեղեկություններ (եթե կան) և թվելով այն բոլոր տեղերը, ուր հիշատակված է այդ անձը ամբողջ հայ հին մատենագրության, ձեռագրաց ցուցակների և հեղինակի կողմից առանձնապես կարևոր համարված նոր աղբյուրների մեջ, Այս ընդարձակ ծրագիրը հեղինակն ի կատար է ածել բացառիկ բարեխղճությամբ և ուշադրությամբ և այդպիսով իսկ տվել մի աշխատություն, որ իբրև տեղեկատու ձեռնարկ չափազանց մեծ արժեք է ներկայացնում թե հայ լեզվաբանության, թե հայ ժողովրդի պատմության, թե հայ մանասիրության համար:

Բառարանագրության ասպարեզում նշանավոր երևույթ է ՀՍՍԻ Գիտ. Ակ. իսկական անդամ, պրոֆ.-դոկտոր Ստեփան Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ը. Ի. Վ. Ստալինին նվիրված չորս հատորանոց գրքի հրատարակությունը. առայժմ լույս են տեսել բառարանի առաջին, երկրորդ և երրորդ հատորները. չորրորդ հատորը տպագրվում է: Այս մեծածավալ աշխատությունը ոչ միայն հեղինակի գլուխ գործոցն է, այլև հայագիտության վերջին տարիների մեջ ձեռք բերված նվաճումներից մեկը: Երկարամյա համառ ու անխնջ աշխատանքի արդյունք հանդիսացող այս բառարանը յուր տեսակի մեջ առաջինը լինելով, ներկայացնում է հայոց լեզվի բառապաշարը հինգերորդ դարի մատենագրությունից սկսած մինչև մեր օրերի գրական լեզուն և բարբառները: Նրա ընդգրկած նյութի մասին լրիվ պատկերացում կազմելու համար ավելորդ չենք համարում մեջ բերել հեղինակի խոսքերը յուր բառարանի ծրագրի մասին. ըստ այդ ծրագրի, չորս հատորի մեջ այդ բառարանը պարունակելու է հայերեն լեզվով գրված ու խոսված բոլոր բառերը մեր մատենագրության սկզբից սկսած մինչև մեր ժամանակները, այսինքն բառամթերքները գրաբարի, ստորին գրաբարի, ռաբբինների, արդի գրական լեզվի և գավառական բարբառների՝ իրենց ռեալանություններով, հին և նոր ժամանակի փոխառյալ բառերը եվրոպական կամ այլ լեզուներից՝ ցույց տալով նրանց ծագումը, գրական լեզվի ու բարբառների համար համապատասխան օրինակներ, քերականական ցուցումներ և այլն» (հատոր առաջին, առաջաբան, էջ է): Այս ընդարձակ ծրագիրն արդեն բավական է, որպեսզի գաղափար կազմենք բառարանի համապարփակ բովանդակության մասին: Հայերեն լեզվի համար մինչև այժմ այդպիսի բառարան չի եղել, ընդ հայկազյուն բառարանը (I—II հատոր, Վենետիկ, 1836—37), որ լավագույն հայերեն բառարանն է, գրաբարի բառերն է միայն պարունակում, ուրիշ բառարաններ նույնպես հայոց լեզվի այս կամ այն մասն են ընդգրկում (աշխարհարար, բարբառներ են): Մալխասյանցի այս բառարանը միակն է, որ ընդգրկում է հայոց լեզվի բոլոր շրջանները (հարկավ՝ գրերի գյուտից հետո), որքանով այդ հնարավոր է եղել հեղինակի համար: Իսկ լույս տեսած չորս հատորները ցույց են տալիս, որ շատ բան է հնարավոր եղել, և հեղինակը պատվով է կատարել իր ստանձնած գործը: Իր տեսակի մեջ առաջինը լինելով հանդերձ, բառարանն

ըստ ամենայնի կատարյալ գործ է: Թե պարունակած բառամթերքով, թե բառերի բազմաթիվ նշանակությունների բացատրությամբ՝ մանավանդ այդ նշանակությունների փոփոխման ու զարգացման տրամաբանական ու պատմական հաջորդականությունը պահպանելով, և թե բազմաթիվ ոճեր պարունակելով՝ գիրքն արդյունք է հեղինակի տքնաջան ու հմուտ գիտական ուսումնասիրությունների: Անվերապահորեն կարելի է ասել, որ այդ բառարանը հայ բառարանագրության գլուխ-գործոցներից մեկն է:

Բառարանագրության ասպարիզում կարևոր նշանակություն ունեն հրատարակված բազմաթիվ մասնագիտական բառարանները: Ազգային լեզվով գիտական գրականության ստեղծումն ինքնին անհրաժեշտություն է առաջ բերել՝ մշակել մինչև Հայաստանի սովետականացումը հայերենում չեղած բազմաթիվ տերմիններ. Սովետականացումից հետո հայերեն լեզուն հարևատացել է անհամար գիտական, քաղաքական տերմիններով, որոնք ընթերցող մասսաներին մատչելի դարձնելու համար արդեն հրատարակված են բազմաթիվ բառարաններ գիտության տարրեր, ճյուղերի համար, ինչպես՝ Աշխատանքային տերմինների բառարան, Շինարարական տերմինների բառարան, Երկաթուղային տերմինների բառարան, Իրավաբանական բառարան, Բուսաբանական բառարան և այլն և այլն: Այս բառարանները մեծապես նպաստել ու նպաստում են հայերենի տերմինաշինարարության գործին: Վերջապես. անհրաժեշտ է հիշառակել նաև ուղղագրական բառարանների հրատարակությունը: Հայտնի է, որ հայոց լեզվի ուղղագրության կայունացման համար մինչև այժմ քիչ բան չի կատարված ՀՍՍՌ Լուսժողկոմատին կից Տերմինաբանական կոմիտեի կողմից. սակայն Տերմինաբանական կոմիտեի կատարած աշխատանքը՝ հայերեն բառարանի ուղղագրության ճշտման ու կայունացման ուղղությամբ, ապարդյուն կմնար, եթե լայն մասսաներն այդ բանին հաղորդակից չլինեին: Ուստի և՛ գործնական տեսակետից մեծ նշանակություն ունի ուղղագրական առձեռն բառարանների հրատարակությունը, որոնցից վերջինը և լավագույնն է պրոֆ. Ար. Ղարիբյանի կազմած «Հայերեն ուղղագրական նոր բառարան»-ը (Երևան, 1946 թ.): Բառարանը, բացի բառացանկից, պարունակում է նաև Տերմինաբանական կոմիտեի բոլոր «որոշումները» հայերենի ուղղագրության այլևայլ հարցերի վերաբերյալ. այդպիսով՝ բառարանը հանդիսանում է հայերենի ուղղագրության միակ ամբողջական ձեռնարկը:

Բառարանագրության ասպարեզում առանձին կարևորություն ունի այլ լեզուներից հայերեն երկլեզվյան բառարանների հրատարակությունը: Այս բնագավառում, սակայն, մինչև այժմ կատարվածը բոլորովին էլ բավական չէ: Այսպես, ռուսերենից-հայերեն բառարանների առանձնապես սուր կարիքին չեն բավարարում հրատարակված երեք բառարանները: Ինչ վերաբերում է օտար լեզուներին, ապա այդ ասպարեզում ոչինչ չի արված: Մինչգեո. թե ռուսերեն, թե օտար լեզուների ուսուցումը վաղուց արդեն անհրաժեշտ են դարձրել ինչպես այլ լեզուներից-հայերեն, այնպես էլ հայերենից-ուրիշ լեզուների երկլեզվյան բառարանների հրատարակությունը:

Այս քսանհինգամյա շրջանում մեծ գործ է կատարված նաև հայերեն բարբառների ուսումնասիրության ասպարիզում: Այն հանգամանքը, որ հայերեն բառարաններն օրըստօրե տեղի են տալիս գրական լեզվին, որ բարբառներից շատերն արդեն իսկ մահացել են, իսկ մնացածները մոտ են

մահացման, առանձնապես կարևոր է դարձնում բարրապահության ուսումնասիրությունը, որը մեծ չափով պետք է նպաստի հայերենի շատ կողմերի լուսարանմանը։ Հայտնի է, որ Ն. Յա. Մանուկյանը էլ շեշտել է հայերենի բարրապահության ուսումնասիրության կարևորությունը, բարբառներ, որոնք իրենց բաղադրանքով անսպառ նյութ են մատակարարում հայերենի ամենակենդան հարցերի լուծման համար։ Եվ ահա այս ասպարեզում առաջին հերթին պրոֆ. Հր. Աճառյանն է, որ յուր բաղադրով ուսումնասիրություններով անդարձ կորստից դիտության համար փրկում է հայերեն բարբառները։ Աճառյանս յուր բարբառագիտական հետազոտություններն սկսել է դեռևս սովետական կարգերի հաստատումից շատ առաջ։ Դեռ 1909 թվին նա հրատարակել է ֆրանսերեն լեզվով *Classification des dialectes arméniens* (Paris, 1909), ապա՝ նույնը վերաձևակերպել է ընդարձակելով՝ հրատարակել է հայերեն «Հայ բարբառագիտություն» վերնագրով (Ն. Նախիջևան, 1913)։ Այս աշխատությունների մեջ՝ առաջին անգամը լինելով՝ Հր. Աճառյանը տվեց հայերեն բարբառների գիտական դասակարգումը և այդպիսով իսկ հայերեն բարբառների ուսումնասիրությունը բարձրագույն գիտական մի բարձր մակարդակի։ Նույն 1913 թ. նա հրատարակել է «Հայերեն գավառական բառարան»-ը (Թիֆլիս) մեծարժեք աշխատությունը։ Սովետական կարգերի օրոք Հր. Աճառյանը է՛լ ավելի մեծ եռանդով շարունակել է յուր բարբառագիտական աշխատանքները։ Այս քսանինգ տարվա ընթացքում նա առանձին գրքերով հրատարակել է. «Քննարկում Մարգարյի բարբառի» (Երևան, 1930), «Քննարկում Ազուլիի բարբառի» (Երևան, 1935), «Քննարկում Նոր Նախիջևանի բարբառի» (Երևան, 1935), «Քննարկում Նոր Զուգայի բարբառի» (Երևան, 1940) «Քննարկում պոստիմյան բարբառի» (Երևան, 1942)։ Բոլոր այս աշխատություններն էլ կազմված են միևնույն սխեմայով և յուրաքանչյուրը հանդիսանում է մի բարբառի ամբողջական, սպառնալից ուսումնասիրությունը։

Հայ բարբառագիտության ասպարեզում խոշոր աշխատանք է կատարել նաև Ար. Ղարիբյանը։ Նրա «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» գիտերապիտ աշխատանքը (Երևանի Պետ. Համալսարանի Գիտ. աշխատություններ, XI, 1939, էջ 23—187), որով ստացել է ֆիլոլոգիական գիտությունների ժողովրդի աստիճան, մեծ նշանակություն ունի հայերենի բարբառային ճյուղերի ճշտորոշման համար։ Այդ աշխատության մեջ հեղինակը՝ առաջին անգամ լինելով՝ քննության է առնում հայերեն վեց բարբառներ (Արզվիլի, Շաղախի, Մեղրու, Կարճևանի, Ուրմիայի, Հաղբուլի) և դրանց համեմատական ուսումնասիրությամբ հայտնագործում հայերեն բարբառների չորրորդ, այսպես կոչված «Ա» ժյուղը։ Յուր այդ գյուղից հետո հեղինակը յուր «Հայերեն բարբառների դասակարգման խնդիր» հոդվածում (Երևանի Պետ. Համալսարանի Գիտ. աշխատություններ, 1942, XIX, էջ 5—18) քննության է առնում դարձյալ հայերենի բարբառային ճյուղերի բաժանման հարսը և վերջնականապես ապացուցում, որ հայերեն բարբառները պետք է բաժանել չորս ճյուղի։

Առանձին բարբառների ուսումնասիրությամբ զբաղվել է նաև Է. Աղայանը, որ առաջմ հրատարակել է Մեղրու բարբառի ամբողջական ուսումնասիրությունը (Երևանի Պետ. Համալսարանի Գիտ. աշխատություններ, 1942, XIX, էջ 251—471)։

Հայ բարբառագիտության ասպարիզում սկզբից ժինչև այժմ կատարվածի ամփոփումը, հանրագումարն է հանդիսանում պրոֆ. Առ. Ղարիբյանի «Համառոտությունն հայ բարբառագիտության» բուհական դասագիրքը (Երևան, 1941)։ Օգտագործելով հայերեն բարբառների մասին եղած ուսումնասիրությունները, որոնց մեջ հատուկ տեղ են զբաղում Հր. Աճառյանի աշխատությունները, և ավելացնելով յուր սեփական հետազոտությունների շնորհիվ կուտակած հարուստ մատերիալը, հեղինակը ավել է հայ բարբառագիտության ամբողջական մի դասագիրք։ Այս աշխատության մեջ էլ հեղինակը վերանայում է հայ բարբառագիտության մի շարք սկզբունքային հարցեր Մառի նոր ուսմունքի լույսով և աշխատում լուծել այդ հարցերը մարքսիստորեն։

Հայոց լեզվին վերաբերող ուսումնասիրությունների մեջ առանձնահատուկ տեղ են զբաղում ժամանակակից հայերենին նվիրված աշխատությունները։ Եթե հայերենի անցած փուլերը պատմության ուսումնասիրությունը գերազանցապես գիտական նշանակություն ունի, ապա ժամանակակից հայերենի ուսումնասիրությունն առաջին հերթին խոշոր նշանակություն ունի հենց գործնական տեսակետից։ Սոցիալիզմի դարաշրջանի հայոց լեզվի մշակումը, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի ու գիտության լեզվի մշակումը ինքնին պահանջում է մեր ժամանակակից լեզվի խորը գիտական ուսումնասիրությունը։ Ժամանակակից լեզվի ուսումնասիրությամբ է, որ պիտի նշվեն մեր ազգային լեզվի հետագա զարգացման ուղին ու հնարավորությունները և պիտի ցույց տրվի, թե ինչից պետք է խուսափել և ինչը, էլ ավելի զարգացնել։ Այս ասպարիզում կատարվածը, սակայն, բնավ ամենևին այն չէ, ինչ պահանջվում է։ Մինչ այժմ հրատարակված են ժամանակակից հայերենին նվիրված երկու աշխատություն։

Առաջինն է ՀՍՍՌ Դիտությունների Ակադեմիայի իսկական անդամ, հանգուցյալ Մանուկ Աբեղյանի «Հայոց լեզվի տեսությունը» (Երևան, 1931)։ Հժուտ հայագետի մեծարժեք աշխատությունը աչքի է ընկնում փաստական նյութի մանրակրկիտ ուսումնասիրությամբ։ Հեղինակը երկարամյա հետազոտությունների շնորհիվ կուտակել է հսկայական նյութ և հմտալից մշակմամբ ամբողջացրել այդ գրքում, որ ընդգրկում է աշխարհարարի հենչյունաբանությունը, իմաստաբանությունը, բառակազմությունը և ձևաբանությունը։ ցավոք, հեղինակը չի վերամշակել և միացրել դրան 1912 թվին հրատարակված յուր «Աշխարհարարի շարադրությունը»։ Աբեղյանի այս գիրքը արևելյան նոր-գրական հայերենի (աշխարհարարի) փաստական նյութի միակ լավագույն ուսումնասիրությունն է և իբրև այդպիսին մեծագույն ավանդ է աշխարհարարի ուսումնասիրության ասպարիզում, սակայն, չնայած իր մեծ արժեքին, այդ աշխատությունը, թեև լույս տեսած 1931 թվին, վերաբերում է մեր լեզվի ավելի վաղ շրջանին, արդեն անցած էտապին՝ գերազանցապես նախառուղիորեն շրջանին և ոչ արդի վիճակին, որի պատճառով էլ մեր օրերում հայոց լեզվի մեջ ծնունդ առած ու զարգացած շատ երևույթներ տեղ չեն գտել նրա մեջ։

Ծրկրորդ աշխատությունն է դոցենտ Գ. Սեվակի «Ժամանակակից հայոց լեզվի տեսությունը» (գիրք I, Երևան, 1939)։ Ամբողջ աշխատությունը բաղկացած է լինելու երեք գրքից։ հրատարակված այդ առաջին գիրքը պա-

րունակում է ամբողջ աշխատության հետևյալ հատվածները. Նախաշավիղ, ժամանակակից հայոց լեզվի կազմավորումը, Հնչյունաբանություն և ձևաբանություն: Նախաշավիղ մեջ հեղինակը քննության է առնում ընդհանուր լեզվաբանական-տեսական մի շարք կարևոր հարցեր (լեզու և լեզվաբանություն, դասակարգային լեզու, ձև և բովանդակություն և այլն): Հաջորդ հատվածը նվիրված է ժամանակակից հայոց լեզվի կազմավորմանն ու զարգացմանը, կամ, ինչպես ընդունված է ասել՝ աշխարհարարի պատմությանը: Հեղինակը ուսումնասիրում և համառոտակի ներկայացնում է մեր ժամանակակից լեզվի կազմավորմանն ու զարգացման երկարատև պրոցեսը սկզբից մինչև մեր օրերը: Այս հատվածը առանձնապես մեծ արժեք ունի այն պատճառով, որ դա առաջին, բայց միանգամայն հաջողված փորձն է արևելյան զրական հայերենի պատմության ուսումնասիրության ասպարիզում: Գրքի մյուս հատվածներում տրված է ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանության ու ձևաբանության տեսական ուսումնասիրությունը: Առանց երկբայության պետք է ասել, որ Սեվակի այս աշխատությունը խոշոր արժեք է ներկայացնում սոցիալիզմի դարաշրջանի հայերենի ուսումնասիրության համար: Սակայն այս գիրքն էլ գերազանցապես հայոց լեզվի տեսական-փիլիսոփայական ուսումնասիրությունն է. այնպես որ, փաստական նյութի մանրախույզ ուսումնասիրությունը, այսօրվա հայերենի բազմապիսի իրողությունների գիտական ամբողջական ուսումնասիրությունը կատարված չի կարելի համարել:

Ժամանակակից հայոց լեզվի բառամթերքի ուսումնասիրության գործում արժեքավոր նպաստ կարելի է համարել ՀՍՍՌ Գիտ. Ակադեմիայի լեզվի ինստիտուտի կազմած Առձեռն բացատրական բառարանը, որի առաջին, փորձնական պրակն է հրատարակվել առայժմ:

Ավելի մեծ աշխատանք է կատարված քերականագիտության և ժամանակակից հայերենի նորմատիվ—դպրոցական քերականություններ կազմելու բնագավառում: Քերականագիտության մեջ առանձնապես ուշադրության է արժանի այն տեսական պայքարը, որ երկար տարիներ զոյություն է ունեցել քերականական տարբեր դպրոցների միջև: Հայտնի է, որ այս դարի սկզբներում Մանուկ Աբեղյանի հրատարակած քերականության դասագրքերով հայ քերականագիտության մեջ հիմնադրվեց այսպես կոչված ֆորմալիստական ուղղությունը: Աբեղյանն ունեցավ յուր բազմաթիվ աշակերտներն ու հետևորդները, որոնք՝ դասավանդելով դպրոցներում հայոց լեզուն՝ հայերենի քերականությունն ուսուցանում էին ֆորմալիզմի հիմունքներով: Իրա հետևանքը այն եղավ, որ Հայաստանում երկար ժամանակ, նույնիսկ սովետական կարգերի հաստատումից հետո անցած առաջին տասնամյակում, իշխում էր ֆորմալիստական ուղղությունը: Քերականության այդ ուղղության դեմ ահա անհաշտ պայքարի ելան Ար. Լարիբյանը և Գ. Սեվակը: Դեռ 1932 թվին նրանք հիմնական փոփոխություններ մտցրին հայկական միջնակարգ դպրոցների հայոց լեզվի քերականության ծրագրերի մեջ, փոփոխություններ, որոնք հավանություն գտան ՀՍՍՌ Լուսժողովրդատու և հաստատվեցին: Սակայն ֆորմալիստական քերականության դեմ իսկական, հրապարակային պայքար ծավալվեց 1934 թվին, երբ լույս տեսավ Ար. Ղարիբյանի «Հայոց լեզվի քերականություն» միջնակարգ դպրոց-

ների դասագիրքը, որ իր սկզբունքներով բացարձակապես հակադրվում էր ֆորմալիստական ուղղությանը:

Այս վերջին ուղղության ներկայացուցիչները (Հ. Գետրոսյան և ուրիշներ) ֆորմալիզմի դիրքերից քննադատել սկսեցին Ղարիբյանի քերականությունը «Պորհրդային Հայաստան» և «Գուլտուրական ֆրոնտ» թերթերում տպագրված իրենց հոդվածներով: Սկսվեց տեսական պայքար: Գործնականում Ղարիբյանի քերականությունն արդեն ընդունված էր իրրև միջնակարգ դպրոցների դասագիրք: Մնում էր, որ տեսականում ես ջախջախվեի ֆորմալիզմը: Եվ ահա պայքարի մեջ մտավ Գ. Սեվակը «Սերունդների կսիվը քերականությանը» բնագավառում: Ընդարձակ հոդվածով («Գուլտուրական ֆրոնտ», 1934, № 33, 34): Այդ հոդվածի մեջ Սեվակը ցույց տվեց նոր քերականության սկզբունքների ճշտությունը և մերկացրեց հակառակորդների ֆորմալիստական տեսությունը: Դրան հետևեց Դ. Սեվակի՝ «Հայսց լեզվի շարադրություն» դասագիրքը (1936), որի մեջ հեղինակը, ինչպես Ղարիբյանն իր դասագրքում, հետևողականորեն կիրառում էր նոր քերականության հիմունքները: Երկու դասագրքերը պարբերաբար վերահրատարակվեցին և 1938 թվից ճանաչվեցին իբրև կայուն դասագրքեր հայկական միջնակարգ դպրոցների համար: Նոր սերունդը այդ դասագրքերով է սովորում հայոց լեզուն:

Քերականագիտության համար կարևոր նշանակություն ունի Դ. Սեվակի «Խոսքի մասերի ուսմունք» աշխատությունը (Պետ. Համալսարանի Գիտ. աշխատություններ, 1939, XI, էջ 189—244): Դա հեղինակի «Խմացաբանական քերականությանը» ներածությունն աշխատության մի գլուխն է, որի մեջ քննության է առնված խոսքի մասերի տեսությունը: Հեղինակը քննադատում է քերականագիտության մեջ տրադիցիոն կարգով ընդունված խոսքի մասերի ուսմունքը և տալիս այն սկզբունքները, որոնցով պետք է կառուցվի իմացաբանական քերականությունը: Դա մի խորը փիլիսոփայական ուսումնասիրություն է քերականագիտության ասպարիզում և մեծ արժեք ունի քերականության տեսական հարցերի լուսաբանման համար:

Ժամանակակից հայոց լեզվի զարգացման ու մշակման գործում զգալի աշխատանք է կատարել ՀՍՍՌ Լուսժողկոմատին կից Տերմինաբանական կոմիտեն: Հայերեն այբուբենի և ուղղագրության մասնակի բարեփոխությունը (1940), ուղղագրական մի շարք հարցերի վերջնական լուծումը (առանձնապես բաղաձայնների ուղղագրությունը), կետադրության կայուն նորմաների մշակումը և բազմաթիվ գիտական-քաղաքական տերմինների կազմումն ու հաստատումը մեր լեզվաշինարարության համար գործնականորեն չափազանց մեծ նշանակություն ունեն: Տերմինաբանական կոմիտեն հաջողությամբ կատարել է այդ աշխատանքները, և ի պատիվ այդ կոմիտեի պետք է ասել, որ շատ հարցերում վերջնականապես վերացել է այն կամայականությունը, որ գոյություն ունեւ նույնիսկ մի քանի տարի առաջ գրական հայերեն լեզվում (օտար բառերի ուղղագրության բազմազանություն, գիտական տերմինների կրկնակի ձևեր և այլն):

Այս է, ահա, համառոտ պատկերն այն ամենի, ինչ որ արված է լեզվաբանության ճակատում այս քսանհինգ տարվա ընթացքում: Սովետական Հայաստանում: Անշուշտ, նկատի պետք է առնել, որ այդ քսանհինգամյակի մի մեծ մասը հանդիսանում է այսպես կոչված նախապատրաստական շրջ-

ջանը նոր, մարքսիստական հայագիտության, իսկական բեղմնավոր աշխատանքները դեռ նոր են սկսվել: Բավական է հիշել, որ բազմաթիվ արժեքավոր աշխատություններ ձեռագիր վիճակում պատրաստ են արդեն տպագրության: Այսպես, պատրաստ է և հանձնված է հրատարակության պրոֆ. Հր. Աճառյանի «Քննություն Զեյթունի բարբառի», պատրաստ է պրոֆ. Գր. Ղափանցյանի «Հայոց լեզվի պատմությունը» (հնագույն շրջան), որից արդեն որոշ հատվածներ տպագրվում են. պատրաստվում է և շուտով հրատարակության կհանձնվի Գ. Սեվակի «Ժամանակակից հայոց լեզվի պատմությունը» ե այլն և այլն:

Այսքանին մնում է ավելացնել, որ այս քսանհինգ տարվա ընթացքում Սովետական Հայաստանը աճեցրել է երիտասարդ լեզվաբանների բազմաթիվ կադրեր, որոնք, զինված մարքս-լենինյան դիալեկտիկական մատերիալիզմով, նվիրվել են հայագիտությանը: Բավական է հիշել, որ այժմ Հայաստանում կան ՀՍՍՌ Գիտ. Ակադեմիայի իսկական անդամ լեզվաբաններ երեք հոգի (բոլորն էլ պրոֆեսոր-դոկտորներ), բացի դրանցից՝ մեկ պրոֆեսոր-դոկտոր, գիտության 10 թեկնածուներ, որոնցից 9-ը դոցենտներ), որոնք, բացի առաջին երեքից, բոլորն էլ սովետական կարգերի օրոք են աճել: Ասպիրանտների մի ամբողջ խումբ պատրաստվում է մտնելու գիտության ասպարեզը:

Այս բոլորը ցույց են տալիս, որ սովետական կարգերի օրով մեր կառավարության և կոմունիստական պարտիայի անսահման հոգատարության ու օժանդակության շնորհիվ Հայաստանը դարձել է հայագիտության իսկական կենտրոնը, հայագիտության իսկական օրրանը՝ ամբողջ աշխարհում: Եթե մինչև 1930 թիվը հայագիտությունը զարգացել է գլխավորապես Հայաստանի սահմաններից դուրս (Թիֆլիս, Մոսկվա, Վենետիկ, Փարիզ, Վիեննա, Կոստանդնուպոլիս ե այլն), ապա մեր օրերում աննախընթաց թափով զարգացավ հայագիտությունը հենց Սովետական Հայաստանում: Սովետական Հայաստանն է այժմ հայագիտության զրոշակակիրը: